ՀՏԴ 929:947.925 Չոլաքեան + 93(=919.81)(569.3)

Doi:10.54503/0135-0536-2024.2-225

ՅԱԿՈԲ ՉՈԼԱՔԵԱՆ. Պատմական Անտիոքի եւ շրջակայից բնիկ հայերն ու միւս հաւաքականութիւնները, *Երեւան, ՀԱԻ հրատ., 2023, 456 էջ*:*

Բանալի բառեր՝ Անտիոք, Քեսաբ, պատմաազգագրական ուսումնասիրություն, բանահյուսություն, բարբառ և բարբառագիտություն, ավանդազրույց, դավանանք:

Վերջերս ընթերցող լայն հանրության սեղանին դրվեց անվանի հայագետ, պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Հակոբ Չոլաքյանի մենագրությունը, որը նվիրված է պատմական Անտիոքի շրջանի բնիկ հայերի պատմաազգագրությանն ու միտված է՝ քննելու, համակարգելու տարածաշրջանի պատմությունը՝ ելնելով պատմաազգագրական, աղբյուրագիտական, բարբառագիտական, բանագիտական սկզբունքներից:



Մենագրության տասներկու ընդարձակ գլուխները, խճանկարի տեսքով ամբողջացնում են շրջանի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, մանրամասն ներկայացնում են Անտիոքի շրջանի պատմաազգագրությունը՝ բարբառից մինչև բանահյուսություն:

Մենագրությունը հարստացված է գրականության, անձնանունների ու տեղանունների ընդարձակ ցանկերով, քարտեզներով և լուսանկարներով:

Առաջին՝ «Պատմական Անտիոքի հայերը (իբրեւ յառաջաբան)» գլխում ներկայացվում է Անիտոքի և տեղի հայության պատմությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից՝ մանրամասն անդրադառնալով տարածաշրջանի հետ կապված յուրաքանչյուր հարցի, յուրաքանչյուր պնդում հիմնավորելով հաճախ մեկից ավելի աղբյուրներով: Հենց այդ բծախնդիր մոտեցումն է թույլ տվել հայագետին հմտորեն կողմնորոշվել պատմության քառուղիներում և ամբողջացնել Անտիոքի շրջանի հայոց պատմությունը, որը թեպետ որոշակի ուսումնասիրված է, սակայն բացերը շատ են, և որի լրացմանն էլ միտված է սույն հետազոտությունը: Այն իր խորությամբ և համապարփակությամբ թույլ է տալիս եզրահանգումներ ու պատասխանատու, ապացուցված պնդումներ անել. «Այս գիրքին մէջ մէկտեղուած յօդուածները կը վերաբերին այս տարածքի բնիկ հայութեան, որ այստեղ նոյնքան հին ներկայութիւն ունի, որքան

* *Ներկայացվել է 27. IV. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:*

պատմիներն ու հոռոմները եւ աւելի հին է քան արաբները, թուրքմէններն ու քիւրտերը» (էջ 13):

Երկրորդ՝ «Արաբական միջնադարեան աղբիւրները Անտիոք քաղաքի եւ շրջակայքի հայոց մասին» գլխում աղբյուրագիտական մեծ հենքի վրա Հ. Զոլաքյանը ներկայացնում է միջնադարյան արաբական գրականության մեջ տեղ գտած Անտիոքի մասին հիշատակությունները՝ գրելով, որ «արաբ պատմիչները հայերը կը յիշատակեն յատկապէս Անտիոքի պաշարման ու առման մէջ անոնց դերակատարութեամբ, Լատին դքսութեան հաստատումէն ետք խաչակիրներու դէմ Արթահի հայոց ապստամբութեան առթիւ եւ դէպի արեւելք խաչակրաց արշաւանքներուն մէջ՝ իբրեւ վարձկան զինուորներ» (էջ 15): Հեղինակը եզրակացնում է, որ արաբական միջնադարյան աղբյուրներում բավական հարուստ նյութ կա Անտիոքի հայության մասին, և, չնայած կատարված աշխատանքին, հայագիտությունը դեռևս անելիք ունի այդ առումով:

Երրորդ՝ «Անտիոքի հայերը կրօնական եւ ցեղային տարաբնոյթ հաւաքականութիւններու մէջ» գլխում անդրադառնում է տարբեր ժամանակներում Անտիոքում բնակություն հաստատած ժողովուրդներին (արաբներ, թուրքմեններ, քրդեր, արևիլներ և այլն)՝ այդ գոյությունը դիտարկելով բնիկ հայության հետ ունեցած հարաբերությունների համատեքստում:

Չորրորդ՝ «Այլաղաւան հայերը եւ անոնց ազգային ինքնութեան խնդիրը» գլխում անդրադառնում է տեղի հայերի կրոնական հարցերին՝ գրելով սիրիական գաղութի այլաղավան հայերի արմատների, դավանափոխության դրդապատճառների, «նորադավան համայնքների մասին»: Պատմաբանն այս գլխում անդրադառնում է նաև ժամանակակից Սիրիայի հայկական գաղութի այլաղավան հայերին, նրանց խնդիրներին և այլն. «Մեծ թիւով լատինացած հայ ընտանիքներ Հալէպի, Լաթաքիոյ, Դամասկոսի եւ Տէր Զօրի լատինաց եկեղեցիներու ծուխ կը հանդիսանան» (էջ 75):

Հինգերորդ՝ «Կասիոս լեռը Անտիոքի շրջանի հայոց աւանդազրոյցներուն եւ հաւատալիքներուն մէջ» գլխում տրված են Հ. Զոլաքյանի բանագիտական հմտությունները՝ առերեսվելով բուն Հայաստանից դուրս կենցաղավարվող հայկական բանահյուսական հատընտիր նմուշների հետ՝ «Սրբազան լեռը», «Պարլումի վանքը եւ Վարդավառի ուխտագնացութիւնը», «Վարդավառի ջրախաղն ու անձրեւաբերը», «Զրանուշը կամ ծովու աղջիկը», «Խոզի ձկնակերպ վիշապի հավատալիքը», «Կասիոս լեռը եւ Նոյեան տապանը»:

Վեցերորդ՝ «Վիշապը (արվանտ) Քեսապի հայոց հաւատալիքներուն մէջ» գլխում բանագետն անդրադառնում է Քեսաբի հայության շրջանում «արվանդ–վիշապի» մասին հյուսված և տարածված բանահյուսական զրույցներին, որոնք ցօրս կան տարեց քեսապցիների հիշողություններում:

Յոթերորդ՝ «Զարն ու չար ոգիները Քեսապի հայոց սնահաւատութեան մէջ» գլխում անդրադառնում է շրջանի հայության մեջ կենցաղավարող հավատալիքներին՝ կապված չարի, դրա ընկալման, հնարավոր վնասների և դրանից պաշտպանվելու միջոցներին, որոնք դարեր շարունակ զբաղեցրել են քեսաբահայի միտքը:

Ութերորդ՝ «Բարբառագիտութիւնը եւ Անտիոքի շրջանի հայերէն խօսուածքները» գլխում հեղինակը քննել է շրջանի հայերի բարբառի տարբեր հնչյունական, քերականական, շարահյուսական կազմությունները և այլն:

Իններորդ՝ «Երգն ու պարը Անտիոքի շրջանի հայոց հաւաքական հանդիսութիւններուն մէջ» գլխում անդրադարձ է կատարվում անիտոքահայության՝ դարերի ընթացքում հյուսած երգերին ու մշակած պարերին, որոնք իրենց առանձնահատուկ տեղն են գրավում հայ երգարվեստում և պարարվեստում: Այս գլխում նկարագրված են նաև ժողովրդական երգերն ու պարերը, և դրանց կատարումը՝ ժողովրդական երաժշտական գործիքներով, որոնց հորինվածքն ու կիրառման ձևերը նույնպես նկարագրված են այս գլխում:

Տասներորդ՝ «Անտիոքի շրջանի հայոց ուխտավայրերը. աւանդապատումներ, հրաշապատումներ» գլխում նկարագրված են շրջանի հայության կողմից պաշտվող ուխտավայրերը, դրանց հետ կապվող ավանդազրույցները և հրաշապատումները: Հեղինակը մանրամասնում է ուխտավայրերի հետ կապված հավատալիքները, նրանց ըմբռնումները (անհատական, ընտանեկան ուխտավայրեր), ժողովրդի վերաբերմունքն ուխտավայրերին, սրբավայրերի ոգիներին և այլն: Նա նշում է նաև, որ համաժողովրդական ուխտագնացությունները միջտարածաշրջանային հաղորդակցության միջոցներ են: Այս գլխում արտացոլված են տարածաշրջանի հայության կրոնական դրսևորումները և դրան առնչվող գեղեցիկ պատմությունները:

Տասնմեկերորդ՝ «Տերուս լեռան հայկական գիւղերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» գլխում հեղինակն անդրադառնում է Տերուս լեռան շրջակայքի հայկական գյուղերին՝ նկարագրելով դրանց պատմական, աշխարհագրական, ազգագրական, կրթական, հոգևոր վիճակը և այլն:

Տասներկուերորդ՝ «Նոր գրառումներ Քեսապի բանահիւսութենէն եւ ազգագրութենէն» գլխում հայագետը ներկայացնում է վերջին շրջանում՝ 2022–2023 թթ., դաշտային արշավների ժամանակ գրառված քեսաբյան բանահյուսական և ազգագրական նյութերի բնագրերը՝ բնագրին հարազատ մնալով, դասակարգված և ծանոթագրված:

Այսպիսով մենագրությունը, լինելով հայագետ Հակոբ Զոլաքյանի հերթական աշխատությունը, շոշափում է հայոց պատմության համար կարևոր, մեր պատմագիտության մեջ թերի մի շրջան, որը որքան հեռու է բուն Հայաստանից, այնքան էլ՝ կարևոր մեզ համար:

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող, հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ բանահյուսություն, ազգագրություն, XVIII–XIX դդ. հայ գրականություն: Հեղինակ է 5 հոդվածի: ORCID:0009-0006-8185-149X. gevorg.gyulum.1995@gmail.com